

ԹԹՈՒԱԾԻՆ

Posted on December 22, 2019 by Keghart

keghart.com

Category: [Opinions](#)



✘ **Լուսարձակի տակ**

Դոկտ. Գեորգ Եազրճեան, Երեւան, 1 Յունուար 2020

Քանի մը տարուան դադարէ ետք, keghart.com վերլուծական կայքը ահաւասիկ կը վերընծիւղի՝ Էապէս թարմացած աշխատանքային ստեղծագործական անձնակազմով: Հրատարակչի՝ Տիգրան Աբրահամեանի [New Team at Keghart's Helm](#) խօսքը

✘ կ'անդրադառնայ այս թարմացման՝ անուն առ անուն նշելով անձնակազմին անդամները եւ լաւագոյնս ներկայացնելով կայքի բովանդակութեան բնոյթը: Այստեղ կը փափաքինք լուսարձակը բանալ այս առնչութեամբ կարգ մը իրողութեանց վրայ.

1.- Անձնակազմը մէկ ծրագրի շուրջ կը մէկտեղէ երիտասարդ, միջին ու երեց սերունդի հայեր: Այս երեք խաւերը միեւնոյն երեւոյթներու հանդէպ յաճախ կրնան որոշակիօրէն տարբեր մօտեցումներ ունենալ, անոնց տալ տարբեր գնահատականներ: Եւ ճիշդ հո՛ւս է keghart.com-ի յաջողութեան երաշխիք բանալիներէն մէկը: Կեանքը կը թաւալի, մա՛նաւանդ վերջին տասնամեակներուն՝ շատ արագացած է, եւ միայն երիտասարդութիւնն է, որ ըստ էութեան կրնայ այդ խօլ վազքին ետեւէն հասնիլ, երբեմն ալ՝ այդ վազքի դրօշակիրն ըլլալ, ինչպէս եղաւ 2018-ի Հայկական Գարնան՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ:

✘ **Լուսարձակի տակ**

Դոկտ. Գեորգ Եազրճեան, Երեւան, 1 Յունուար 2020

Քանի մը տարուան դադարէ ետք, keghart.com վերլուծական կայքը ահաւասիկ կը վերընծիւղի՝ Էապէս թարմացած աշխատանքային ստեղծագործական անձնակազմով: Հրատարակչի՝ Տիգրան Աբրահամեանի [New Team at Keghart's Helm](#) խօսքը

✘ կ'անդրադառնայ այս թարմացման՝ անուն առ անուն նշելով անձնակազմին անդամները եւ լաւագոյնս ներկայացնելով կայքի բովանդակութեան բնոյթը: Այստեղ կը փափաքինք լուսարձակը բանալ այս առնչութեամբ կարգ մը իրողութեանց վրայ.

1.- Անձնակազմը մէկ ծրագրի շուրջ կը մէկտեղէ երիտասարդ, միջին ու երեց սերունդի հայեր: Այս երեք խաւերը միեւնոյն երեւոյթներու հանդէպ յաճախ կրնան որոշակիօրէն տարբեր մօտեցումներ ունենալ, անոնց տալ տարբեր գնահատականներ: Եւ ճիշդ հո՛ւս է keghart.com-ի յաջողութեան երաշխիք բանալիներէն մէկը: Կեանքը կը թաւալի, մա՛նաւանդ վերջին տասնամեակներուն՝ շատ արագացած է, եւ միայն երիտասարդութիւնն է, որ ըստ էութեան կրնայ այդ խօլ վազքին ետեւէն հասնիլ, երբեմն ալ՝ այդ վազքի դրօշակիրն ըլլալ, ինչպէս եղաւ 2018-ի Հայկական Գարնան՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ:

Միջին ու յատկապէս երեց սերունդները, չնչին բացառութիւններով, հազիւ կրնան այդ

գնացքին վերջին վակոնեն կառչիլ՝ երթեն դուրս չմնալու համար: Հետեւաբար, վերջիններս իրաւունք չունին իրենց տեսակետները պարտադրելու նոր սերունդին. անոնք պետք է բաւարարուին երիտասարդութեանը յորդորելով միայն: Ամբողջովին իրաւացի էր լիբանանցի փիլիսոփայ գրող Ժըպրան Խալիլ Ժըպրանը, երբ ծնողներուն կը յորդորէր՝ «Ձեր գաւակները ձեր գաւակները չեն, անոնք կեանքին գաւակներն են»: Եւ մենք կ'ուզենք, որ մեր գաւակները համաշխարհային կեանքին ընդելուզուած հայ նոր կեանքի գաւակներն ըլլան ու իրենց աշխատանքով, տքնանքով, ինչո՞ւ չէ՝ նաեւ ակամայ սխալներ թոյլ տալով կերտեն հայութեան պայծառ գալիքը:

2.-Անձնակազմը կը մեկտեղէ ներկայացուցիչներ հայութեան երեք հատուածներ՝ հայրենաբնակներ, սփիւռքահայեր, Հայրենիքին մէջ ուսանած, ապա սփիւռք վերադարձած, կամ հոնկէ վերստին Հայրենիք եկած ու հոն հաստատուածներ: Եթէ հայրենաբնակներու եւ «մաքուր» սփիւռքահայերու քով կրնան որոշակի կարծրատիպեր ըլլալ մեկգմէկու նկատմամբ, վերջին հատուածը, ըստ էութեան լաւ իմանալով թէ՛ հայրենաբնակներու եւ թէ՛ սփիւռքահայերու հոգեբանական առանձնայատկութիւնները, անոնց հոգեկերտուածքի ու աշխարհայեացքի առաւելութիւններն ու թերութիւնները, կրնայ ոչ միայն ոսկէ կամուրջի դեր կատարել այս երկու հատուածներուն միջեւ, այլեւ լաւագոյնս ծնողն ըլլալ համահայկական ծրագիրներու գաղափարներու եւ նպաստել անոնց իրականացմանը:

Չենք յաւակնիր ըսել, թէ keghart.com-ը համահայկական բնոյթ ունի: Այդ մասին թող ընթերցողն ինքը դատէ ըստ կայքի բովանդակութեան: Այդուհանդերձ, նշեալ երեք հատուածներու միաւորումը կայքին շուրջ՝ կարելոր գործօն մըն է, որպէսզի հարցերը կայքին մէջ արծարծուին եւ վերլուծուին համահայկական շահերու մօտեցումով՝ անշուշտ պահպանելով թթուածինի նման անհրաժեշտ բազմակարծութիւնը:

Բացի անձնակազմին վերաբերող այս յատկանիշներէն, կ'առանձնացնենք keghart.com կայքի եւս մէկ յատկանիշը՝ անոր ի՛սկապէս ազատ ու անկախ լրատուամիջոց-հարթակ ըլլալու իրողութիւնը: Չենք ընդունիր այն խօսքը, թէ լրատուամիջոց մը կրնայ ազատ ըլլալ, բայց ոչ անկախ: Մեր համոզմամբ, մարդկային գործունեութեան բոլոր ոլորտներուն մէջ, ազատութիւնն ու անկախութիւնը ուղղակի փոխկապակցուած են, միեւնոյն հարթութեան վրայ կը գտնուին:

Շատ հինէն կու գայ ժողովրդային իմաստուն խօսքը, թէ «Դրամ տուողը կը թելադրէ երաժշտութիւնը»: Բարեբախտաբար, մեր կայքի «երաժշտութիւնը» թելադրողը նոյնիսկնքն հայ ժողովուրդն է, որու շահերուն ծառայելու առաքելութիւնն ունի մեր կայքը: Հետեւաբար, մեր աշխատանքը չի կրնար պայմանաւորուած ըլլալ այս կամ այն դրամատիրոջ կամ շրջանակի շիլ հաշիւներով: Կայքը, բոլոր պարագաներուն եւ մշտապէս, պիտի մատակարարէ այն թթուածինը, որ անհրաժեշտ է մեր ազգի՝ առո՛ղջ միտքով գոյատեւման համար:

Եւ թող Աստուած, ընթերցողը ու ժամանակը իրենք ըլլան դատաւորը մեր ծառայական գործունէութեան:

=====

Դոկտ. Գեորգ Եազըճեան ծնած է 1961-ին, Պէյրուզ: Բարձրագոյն ուսումն ստացած է Երեւանի մէջ (թեքնիք գիտութիւններու մագիստրոս՝ Էլէկտրական երկրաչափ, պատմական գիտութիւններու թեկնածու): Հեղինակ է ութը մենագրութիւններու եւ 700-է աւելի յօդուածներու՝ զանազան պարբերականներու եւ ժողովածուներու մէջ: Խմբագրած է 100-է աւելի գիրքեր, եւ դասախօսութիւններով ու հայագիտական գիտաժողովներու մէջ զեկուցումներով հանդէս եկած Հ. Հ.ի, Լիբանանի եւ Եգիպտոսի մէջ: 1990-ականներու սկիզբին խմբագրած է Պէյրուզի "Սփիւռք" եւ արաբերէն "Սատա Արարատ" պարբերաթերթերը: Այժմ գլխաւոր խմբագիրն է «Մեհրի Մշակութային-Տեղեկատուական Կենտրոն»ին եւ մաս կը կազմէ «keghart.com»ի խմբագրական կազմին:

